



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 25

— Տ Ե Ա Ր Ա Ր —

18 ՅՈՒՆԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒՍՈՒՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՐ
Տարեկան 50 Ղ.բ.	Տարեկան 54 Ղ.բ.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պէյ խանին սահ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ
մը նորելու ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրչին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատար-
ուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանգեսին մեջ ամենեւնի
բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Աղի ճասկուի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ դէռ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ!

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Սինկերի մեքենաները

- | | |
|---------|--|
| ԲՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան Համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԻԻՏԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ Իրաշխատորութիւն

Մասնաւորապէս զաւտենալու բոլոր ֆալսիֆներու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւղօղլուի տունը :

ՖԷՆԻՔՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանֆ

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանֆ

- ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
- ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔրիէՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութեան կ'ընդունին իշխաւառ պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. ՏԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 25

ՇԱԲԱԹ

18 Յունիս 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանող մանկուրիւնը մեր եւ osar վարժարաններու մէջ. (խմբագրական). — ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԶՆԱԻՐԵԱՆ: Ստուերներ. — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ: Կոյսին աղօթք. — ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՑԵԱՆ: Արուեստագէտի մը օրացիք. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵՂՆՑ: Յու-
օսեսերիս եջերէն (Ֆանքեղի). — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ: Մեր գրագիտութիւնները. — ԳՐ.
ՀԱՄԲԻԿԵԱՆ: Մասամիմ հնարքը (աչիս սեսածէն, ականջիս լսածէն): Մարտուններ
(Ոսանաւոր). — ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ: Բարձր ու խելացի խօսքեր. — ՍԱՂԱԹԻԷԼ
ՊՕՂՈՍԵԱՆ: Յիրուցան խօսքեր. — ԱՐՇԱԿ ԻՍԳԷՉԵՐԵԱՆ:

ՈՒՍԱՆՈՂ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Որովհետեւ տափակ մտածումները այնչափ շատցած են մեր մէջ որ է՛ն լուրջ
գաղտնաբարի մը արտայայտումին մէջ իսկ, մասնաւոր չափազանցում մը կը փնտ-
ռուի, պէտք կ'զգամ նախապէս յայտնելու թէ՛ մեր մատաղ մանկութեան օ-
գուտէն զատ ու է՛ գիտում չեմ ունեցած ներկայ գրութեանս մէջ, ոչ ալ բան
մը գրած ըլլալու պզտիկ փառասիրութիւնը, զոր շատեր, հակառակ իրենցմէ
սպասուած լրջութեան ու անկեղծութեան, կը պահեն տակաւին՝ գրուածքի մը
պատասխանատուն չըլլալու միամիտ մտածումով:

Չեմ յիշեր ո՞ր խելացին ըսած է ժամանակին թէ՛ եթէ խօսիլը արժաթ է,
լռութիւնն ալ ոսկի կ'արժէ, և սակայն պարագաներ կան, որոնց մէջ, պահուած
այդ կուռ լռութիւնը, ոսկի չէ՛, արժաթ չէ՛, երկաթ ալ չարժեր՝ երբ նկատի
առնուի մանաւանդ որ այդ գոյ-բերանութեան հետեւանքով, այդ ծածուկ-փո-

րիկ սովորութիւնով մէկ երկու հոգի չէ, անբողջ մանկութիւն մըն է որ կը վնասուի :

Թէ ինչպէ՞ս, ցուցնենք :

Առտու մըն էր, նոր գործ տաեցիս կը մանէի, երբ յանկարծ արհեստակիցներէս մէկը մօտենալով ինձի,

— Կարդացի՞ր Մանգոլմէն, հարցոյց :

— Ի՞նչ կայ որ, պատասխանեցի հետաքրքրուած :

— Առ, նայէ՛, Արամիկիդ գպրոցին համար ինչե՛ր գրեր են :

Ու թերթը առնելով կարդացի նամակ մը, որուն մէջ ըսուած էր թէ՛ այդ օտար վարժարանը յաճախող մեր պղտիկները ինչպէս կսպասէին գպրոցին դուռը՝ ժամերով, ցուրտին ու փառքին նշառակ և թէ ինչպէս անտարբեր կը դռնըռէին այդ գպրոցին վարիչները այս անօրինակ անտարանին տուջի, առարկելով թէ՛ վարժարանը որոշեալ ժամու մը կը բացուէր և թէ աղաքները գիտնալով այդ ժամանակը, պէտք չէր որ կանխէին և դուռը մնային :

Ահա, ինքնին անշտն, ոչինչ դէպք մը, որ սակայն եկեր ու այնչափ մեծցեր էր տոհմային գաղտնաբերութեան նախանձախնդիր (°) այդ նամակագրին գանկին մէջ, որ վերջապէս որոշեւ էր նամակ մը գրել արեւուն հետ ելնող Մանգոլմէն :

Ու այդ նամակն էր որ մենք կը կարդայինք հիմա, ինչպէս կարդացած էին ուրիշ շատեր ալ, մինչև խնդիրին առարկայ եղող վարժարանի ուսուցիչները՝ որոնք սակայն մաղի չափ չէին չեղած իրենց գիտցածէն :

Այս հրատարակութեան վրայ անցան քանի մը օրեր. և օր մը, բաւական ցուրտ օր մը, որովհետեւ ձմեռ էր եղանակը, երբ այդ վարժարանին առջեւէն կանցնէի, տեսայ որ վարժարանին ամբողջ ուսանողութիւնը հոգ, այդ բացօդեայ պարտէզին մէջ, առտուան դրօսանքը կընէր խաղալով, ցատկելով, կարմրելով, քրտնելով՝ անտարբեր ու անգիտակ պաղին, տաքին, ցրտառութեան վտանգին, մինչ ատիւն ուսուցչական մարմինը, մեծ մասամբ գեղեցիկ սեռէն, վերարկուներու, շաքերու մէջ կծկաւ՝ կը դիտէր պղտիկներուն այս խօլ վազվառաքը՝ անխմաստ, անհասկնալի անտարբերութիւնով մը, ինչպէս պիտի ըսէին բոլոր տեսնողները :

Հօրենական պղտցումէ մղուած՝ եթէ ոչ ուրիշին զուկրներուն, դէթ մէկհատիկիս սիրուն համար, որ անոնց մէջն էր, մօտենալով այդ օրհարդներէն մէկուն, ըսի,

— Աղէկ բան մը չէ, օրիորդ, ձեր այս ըրածը, դուք մեծերդ այսչափ լաւ պատասխարուած ըլլալով հանդերձ կը դուռք կճող ցուրտին ազդեցութենէն, հապա այս պղտիկները, որոնք՝ դրօսանքի հաճոյքէն հրապուրուած՝ չեն զգար ցուրտին ազդեցութիւնը, չե՞ն պաղիր, չե՞ն հիւանդանար . . . խնդրեմ, ինչնայեցէ՛ք անոնց առողջութեան, վերջացուցէ՛ք այս դրօսանքը կամ գոնէ նպաստաւոր օրերու վերապահեցէ՛ք :

Օրիորդը պատասխանեց,

— Դպրոցին մէջ անոնց առողջութիւնը մեզի կը պատկանի, քանի որ մեր

զաւակներն են անոնք հոս, վարժարանը իր օրէնքը ունի ուրիշ չենք կրնար բաժնուիլ, միայն թէ՛ եթէ ձեր զաւակը մասնաւոր անհանգստութիւն մը ունի, կրնանք զրկել զինքը զրօսանքէն:

Օրիորդին պատասխանը անել կացութեան մը մէջ կը դնէր ինծի. կզգայի որ օտար վարժարանի մը մէջ գտնուելով, իրաւունք չունէի անոնց դժած սահմանը անցնիլ. ուստի, կամ պէտք էր որ հպատակէի այդ օրէնքին և կամ խնդրէի որ զաւակս զատէին իր ընկերներէն, և, իբրեւ հիւանդ, զրկէին անիկա իր է՛ն շատ սիրած զրօսանքէն, բան մը որ աւելի գէշ պիտի ազդէր պզտիկիս վրայ. Հետեւաբար ուրիշ բան չէր մնար ընել ինծի, բայց եթէ ներողութիւն խնդրել անհարկի դիտողութեանս համար ու մեկնիլ:

Տղեկս երկար ատեն գնաց-եկաւ այդ վարժարանը, ամառ ձմեռ վայելցնելով օրական երեք որոշեալ ժամերու զրօսանքները և այսօր, ուրախ եմ ըսելու թէ՛ աւելի զուարթ, աւելի առողջ դարձաւ գպրոցէն, քան որչափ չէր եղած ատենը մնացած ատենները, vacanceներու ժամանակ:

Ու եղաւ որ օր մը, բարեկամի մը հետ այդ գպրոցը երթայինք՝ հանդիսաւոր քննութիւններուն ներկայ գտնուելու փափաքով. մեզի հետ, շատ մը ծնողքներ ալ եկած էին հոն, ամէնքն ալ սիրալիր ընդունելութիւն գտնելով. և բան մը, որ ամենէն աւելի աչքի կը զարնէր հոս, ան ալ կարգապահութիւնն էր դարձեալ որ իսպառ գոյութիւն չունի և չպիտի ունենայ մեր նմանօրինակ հանգէսներուն մէջ՝ քանի որ մենք չենք գիտեր վայելիլ անոնք պատշաճութեան սահմանի մէջ ու մամլիկէն մինչև թուրիկ, մօրաքոյրէն մինչև հօրաքոյր, հարսէն մինչև կեսուր կերթանք, կը լեցունք իրարու վրայ՝ կատարեալ լարիւրինթոս մը ձեւայնելով հանգէսն ալ: Հոս, չուզելով բաղդատութիւնն ընել այդ երկու հանգէսներուն, մերինին ու անոնցին, որոնք արդէն չեն բաղդատուիր՝ շատ մը տեսակէտով, կանցնիմ հրապարակային քննութիւններուն, որոնք տեսանք, լսեցինք ու հիացանք: Հոս տեսանք աշակերտները, ամէնքն ալ մաքուր, ու ամէնքն ալ կոկիկ հագուած, ամէնքն ալ բարեձև շարժումներով. հոս ուսուցիչը չէ որ կը խօսի այլ աշակերտը. իւրաքանչիւր տղայ ըստ բաղդի հարցում մը կը քաջէ հարցարանի տփիկէն որ հոն սեղանին վրայ կը գտնուի և ձեռքը բռնած անիկա կը խօսի կը զրէ առանց կմկմալու, առանց կենալու անանկ վարժ, ունանկ համարձակ, անանկ ընտանի ձեւով մը, որ կ'սքանջանաս պարզապէս. հոս վարժապետը չի ձգեր իր է՛ն տկար աշակերտն անգամ, ու չըսեր միւսին,

— Ծօ՛, Կարապետ դո՛ւն ըսէ:

Հոս օրիորդը իր հարցումը ուղղելով ու է տղկան մը, կըսէ.

— Օրիորդ Հերմինէ, կը հաճի՞ք ըսել ինչ թէ ի՞նչ է . . . մալորակը, օրինակի համար:

Հոս կը տեսնես վերջապէս 12-13 տարեկան պատանիներ, որոնք վարպետ գծագրիչի մը վարժ մասններով ականջի ու աչքի պատկերները կը գծեն տախտակին վրայ, անոնց ներքին ու արտաքին մասերովը և անանկ լաւ բացատրութիւններ կուտան, որ պահ մը հմուտ բժշկի մը ներկայութեան ըլլալ կը կարծես:

Ու երբ այս գեղեցիկ տպաւորութեան տակ գուրս կենեա այդ օտար վարժարանէն, միտքդ կուգան յանկարծ մեր թաղային վարժարանները իրենց ուսուցիչներով, ուսանողներով, դասաւանդութեան ձեւերով, տարեկան հանգէսներով եւ այլն, որոնք — մե՛ղք որ — մի և նոյն լաւ տպաւորութիւնը չեն ձգեր:

Յ. ԱՋՆԱԻՈՐԵԱՆ

ՄԵՐ ԳՐԱԳԻՏՈՒՅԻՆԵՐԸ

[ՖԱՆԹԵԶԻ ՅՕԴՈՒԱՆ]

Գրական տեսություն մը ընել չէ նպատակս, սիրելի ընթերցող, ինչպէս կ'ընեն մեր գրողներէն շատեր տարին մէկ անգամ Յունուարին, քանի մը սլենակ ըստ կամս գրուած և աւելորդ պատշաճի յօդուածի մը տակ սանձասօն երկայնքն ի վեր պառկելով։ Ոչ ալ, կեւշեմ արեւոյցիկը քննադատական մը նուիրել մեր գրագիտութիւններուն։

Կուզեմ մատնանիչ ընել սա պարագան թէ, մեր գրագիտութիւններուն թիւը օրէ օր նուազելու վրայ է դառնալով արտա Նուազում մը, որ եթէ դարձանուելու չըլլայ, երկրաչափական յառաջատուութեամբ մը շարունակուել կը սպաննայ։

Բայց բուն խնդրին անցնելէ առաջ, տեսնենք թէ զարգիւս գրականութիւնն ըսելով ինչ կը հասկնանք, մենք մանաւանդ Պոլսեցիք։

Մեր գրականութիւնը սահմանափակուած է այսօր լոկ լրագրութեան սիւնակներուն մէջ, որոնք երբեմն, պարսպ ձգուած էջերը չհաշուելով, տեսրակիկներ կ'երեւին և ճրմարան կամ դարնան մի ասուպի տպաւորութիւնը և վաղանցիկութիւնը կ'ունենան։

Բանաստեղծութիւնն ալ մեծ տեղ մը կը գրաւէ այս կարծեցեալ գրականութեան մէջ։

Ուրեմն կրնանք ըսել թէ, մեր գրականութիւնը ամուլ կը սեպուի։

Գիրքն է գրականութիւնը, այն է միայն որ այս անունին արժանի է իրապէս։ Լրագրութիւնը երկրորդական դեր մը ունի գրականութեան մէջ, որքան ալ անիկա կատարելագործութեան մը հասած ըլլայ։

Պէտք է թարգմանել օտար հրաշալիքներ, գրել օգտակար և հրահանգիչ գիրքեր, և այսպէսով մեր գրականութիւնն ալ դնել իր բուն ուղղութեանը մէջ, դարձուս պահանջումներուն համեմատ։

Բայց գիրք ըսելով, դաւառի մէկ անկիւնէն, կամ Պոլսոյ մէկ վարժապետէն զըրուած հետեւակ դասագիրք մը պէտք չէ իմանալ, որ միայն Ուսումնական Խորհուրդի մը կնիքը, և ճոխացեալ եւ բարեփոխուլ բառերը կրելու սին վատքը ունի միայն։

Աւարկեն ոմանք զուցէ, ընթերցող ո՛ւր պիտի գտնենք։ Ինչ անհեթեթ գաղափար, լաւ ճաշի մը ներկայացող շատ կ'ըլլայ։

Բայց զայս առնել և դայն չթողուլ։ Մեր գրագէտները և գրագիտութիւնները ի վիճակի են այս պահանջումները գործադրելու։

Մերոնք, իբր ամսքեօս, կը գրեն յաճախ, շատ քիչեր իրենց բան ու դործ ըրած են գրականութիւնը. այս ալ հրատարակագրութիւնն է միայն։

Եւ ասիկա երկու պատճառաւ, նախ զբաղումներու առատութիւն, երկրորդ վարձատրութեան պակաս, առեւտրական յոգնատանջ «առի տուի» ներ, ժամանակ չեն ձգեր որ մարդ մտածիտօք բան մը արտադրէ։

Որով մեզ կը մնան կին գրողները, որոնք պիտի բեղմնաւորեն մեր գրականութիւնը։

Ասով գրականութեան ճակատագիրը բոլորովին կանանց յանձնած չենք ըլլար։

Այսօր ունինք թէ կին և թէ այդ գրողներ, որոնց մէջ ամուսինները նշանակելի թիւ մը կը կազմեն երկու կողմէն ալ։

Թող ամուսին գրագէտները ամուսնանան ամուսին գրագիտութիւններու հետ։

Պարսպ խօսք է, երկու գրագիտաց միութեան մէջ նիւթական անձկութիւն մը նշմարելը։

Որովհետեւ կինը օգնելով ամուսնոյն զըրական աշխատութիւններուն մէջ, այլը աւելի ժամանակ և առիթ կ'ունենայ նիւթական չաչը մտածելու և հետապնդելու։

Ուրեմն պէտք է որ մեր գրագէտները ամուսնանան գրագիտութիւններու հետ։

Արդէն փորձերը կը ցուցնեն թէ այսպիսի միութիւններու գրական գործունէութիւնը ըստ բաւականի բեղմնաւոր կըլլայ։

Այսպէս ո՛վ չսիրտի ուրախանայ մեր մէջէն, ըլլայ գրագէտ, ըլլայ ոչ-գրագէտ, երբ իմանայ թէ գրագէտ մը ամուսնացած է գրագիտութիւն մը հետ։

Այն ատեն, թէ հիմակուան պէս ամուլ չըլլար յօդուածներ արտադրելու մասին, և թէ իր շնորհիւ մեր գրականութիւնն ալ կուսնայ իր գրական-գործին, ինչպէս գաղղիական գրականութիւնը ունի իր Աղեքսանդր Տիւմա-որդին։

Եւ ասիկա աներկբայ և հաւանական է, քանի որ ամուսնութեան անհրաժեշտ մէկ պայմանն է զգուսկը։

Բերա

ԳՐ. ՀԱՄԻՆԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԵՆ

(ՏԱՆԹԵԶԻ)

Երկրաշաքի

Ամէն ոք նոր բան մը կը փնտռէ հաշ-
նելու կամ խօսելու համար, առանց մտածե-
լու թէ՛ արեւին տակ նոր բան չիկայ :

— Ինչպէս չէ՞, կը ձայնէ Մանգուսի
մէջերէն սիրելի բարեկամս Ենովք Արմէն,
մէջանդ նետելով իր 1904ի քուէսընը (խըն-
դիր ըսել է, այս բառը անգղիերէն կը գնում
նոս ի պատիւ իրեն, յարգելու համար զինքը
որ ամէն տարի Ռօպէտի քօլէճի հանդէսներուն
ներկայ կը գտնուի) :

Խլալուղի ձեռքով կամ խօսքով ամուս-
նութիւնը վերցած, բայց ոչ կարծրուկ ու-
կիները . . . :

Սիրելի բարեկամս Ենովք կը պատուտուի
մարդկութեան միտքը խօթելու համար թէ,
ամուսնութեան համար էն կարեւոր յաջո-
ղութիւնը անկեղծութիւնն է, և այդ հրա-
պարակաւ խոստովանելը :

Եւ ասոր համար կըսէ սիրելագոյն բա-
րեկամս, « այս պարագային ես ինքս եղայ
նախաքայլը առնողը և չեմ գիտեր ո՞ր թեր-
թին մէջ հրատարակեցի ամուսնութեան փա-
փաքս. աղջկան ֆիզիքական առաւելու-
թիւններէն առաջ զորս պէտք էր որ յիշէի,
900 ոսկի առաջարկեցի այն զօռլու աներ-
պապային, որ պիտի հաճէր աղջիկէն առաջ
ինձ յանձնելու պատիւը ընել զսիրտք»։ Եւ եւս
առաւել սիրելագոյն բարեկամս կաւելցնէ թէ
այսպէս պէտք է ընեն բոլոր անոնք, որոնք
ամուրի աշխարհէն ընտանեկան լծը բազմիւ
կը փափաքին :

Այս անթիքիքի և վախճան օտիմիմալ հար-
ցին կամ ինդրոյն պատասխանը ինձ չիյնար
թէեւ, քանի որ տասերկու օրացոյցեր ըրո-
րած եմ ամուսնական կեանքին մէջ, սա-
կայն ամուրի բարեկամներուս կողմէ խօսե-
լով պիտի համարձակիմ հարցնել գերառա-
ւելագոյն բարեկամիս Ենովք Արմէնի թէ,
կարելի է որ ամէն հնարք և կամ գիւտ հա-
ճոյքով ընդունուի հանրութեան կողմէ և
գործադրուի :

Նախ կը հարցնեմ իրեն թէ՛ իր ըրած բե-
ւեւական հրատարակութիւնէն որչափ օգ-
տուեցաւ, թէ քանի՞ աղջիկ զաւկի տէր ծը-
նողք լսողներ ի ձեռին, լուս կամ մութ աչ-
քով եկան փնտռել զինք իբրեւ իրենց իտէալ
փեսայուն, կանակնին ձգած 899 ³/₄ ոսկինոց
տոպրակով բեռնակիրը (¹/₄ ոսկին համալըէ-
լսն է, որ փեսին կը վերաբերի վճարել) :

Համարէ՞ . . . :

Մեր մայրիկները լրագիրը վարդի անու-
շի վրան ծածկելու համար կը գործածեն ու
մէջի ա լա Ենովք առաջարկները չեն կար-
գար :

Երեքշաքի

Անէ՛ծք սա գլխարկներուն, անէ՛ծք, բիւր-
անգամ անիծեալ ըլլան անոնք, որոնց զը-
խուն վրայ աճագին պարտէզ մը կը տատա-
նի իր շուրջանակի ցանկապատով :

Ձեռ գիտեր թէ արդեօք մեր տիկինները
և օրիորդները երբ գլխարկ մը կը գնեն հա-
յելին մէջ չեն նայիր, չեն քննիր, չեն
քննիր այն առարկան՝ զոր վերջէն միլիոնա-
ւոր աչքերու դէմ պիտի կըրնն դուրսը փո-
ղոցը, անոր ասոր քաշքուքին նշաւակ :

Այս տարուանները հաւատալէք ըրորո-
վին անտանելի ենու Երեւակայեցէք 70 սան-
թիմ սինքօֆէւանս, 40 սանթիմ բարձրու-
թիւն և 30 սանթիմ ճակատնէն դուրս չա-
տըռ տեսք մը քառիքաթիւն, զորս երբեմն,
սիւքերու առթիւսիները կը գործածէին ժո-
ղովրդեան խնդուք կամ զբօսանք պատճա-
ռելու համար : Հիմա՛ : Է՛ն միջակ արհես-
տաւորին կինը իր գլխուն վրայ կը կըրէ ա-
տոնք անտարբեր :

Դեռ անցեալ օր ծանօթ բժիշկի մը սա-
լօնը գտնուած պահուս զուարթ խօսակցու-
թիւն մը լսեցի :

Մանկամարդ կին մը և ուրիշ տարեց ջա-
տուկ մը բժիշկին կըստատէին, երբ ջատու-
կը իր հետաքրքրութիւնը յագեցնելու հա-
մար խօսք առաւ :

— Ի՞նչ ունիս ետլրուս, ո՞ր տեղդ է
դօրդ . . . :

— Դլրիս ամառ մտածնուս պէրի իմա չէ
մարիկ, աս ասանկ կը կոտտայ կոր . . . :

— Վայ մեղքիս քուրուկ չի կոտտար տէ
լի՜ն կըլլայ, աֆ կընես ըսելուս ամա, տա
կըլթի չարխաթ կիշառեմ նէ ³/₂ օրա կու-

դայ, նաֆիլէ հէքիմին վիզիթա տալուդ, տուն երթալուդ պէս տա սալխըմ սաչախ պանը տէֆըրէ լըմնցաւ գնաց:

Այս խօսքին վրայ ուշի ուշով այդ տիկնոջ երեսը նայեցայ, և իրաւունք տուի ջատակին:

Քիչ մը պատշաճ թուալէթ ընենք նէ գէշ չըլլար . . . :

Զորեքշաբթի

Ամուսնական տաւաներու շարքին մէջ թաւում լուր մը կարդացի օրաթերթերու մէջ անցեալ օր, զոր անշուշտ ձեր ալ ուշադրութենէն վրիպած ըլլալու է:

Հրեայ երիտասարդ մը հարուստ ընտանիքի մը աղջկան հետ նշանուած, և ճիշդ հարսանեկան օրը երբ նուիրական արարողութիւնը պիտի կատարուի, իր սենեակը առանձնանալով վերջ տուեր է կեանքին, արցունքի հեղեղներու մասնակցով հարսանեկան տունը: Պատճառ:

Որովհետեւ տղան հիւանդ է եղեր, ոչ թէ մտային հիւանդ, այլ կատարելապէս ֆիզիքական հիւանդ:

Մտացի երիտասարդը, փոխանակ սերունդ մը փճացնելու, իր անձին տուեր է վճիռը, այսպէս ազատելով ամբողջ իր ապագայ սերունդը:

Ահա կենդանի օրինակը, քիչ մը չափազանցուած թերեւս, բայց սկզբամբ շատ չիտակ ըստ իս:

Մեր մէջ կատարուած ամուսնութիւնները, լոկ նիւթական ըլլալով, ոչ ոք կը խորհի ֆիզիքականին վրայ: Մեր մայրերը երբ ուզեն իրենց աղջիկը պսակել, եթէ համողութիւն թէ այդ տղան քիչ շատ բարեկեցիկ է և դրամածիտի վրայ ալ այնչափ չի ծանրանար, հաւատացէք թէ նոյն իսկ եթէ անկողնոյ մէջ հոգեւարք ալ ըլլայ «կարգուի նէ պէլքի կաղէկնայ» ըսելով, աէրոէր կը կանչեն և կը պսակեն, առանց խորհելու իրենց ապագայ մատղաշ թուանիկներուն ախտավարակման վրայ:

Այս տխուր իրողութիւնը օրինաւոր վախճան մը չպիտի ունենայ մեր մէջ, քանի որ մեր մայրերը սովորած են կամ կը փափաքին օր առաջ ձեռքէ հանել իրենց սքօքը:

Հաւատացէք ոսկի չըջանալի մէջ պէտք է աւանել և այնպէս հրապարակաւ ճանչցնել այն խելացի մայրը, որ իր աղջկան ձեռքը խնդրող երիտասարդէն բժշկական վկայական մը ուզէ, կէս տուն, մէկ խանութ, 500 ոսկի հնչուն դրամի պէս սին ու պատիր սակարկութեանց մտնելէ առաջ:

Մեր նախամայրը Սեան ունի՞ արդեօք այդ տեսակ թոռ մը:

Հինգշաբթի

Զարմանալի լուր մը ականջս դրին, զոր հրապարակելու մէջ անսկզկութիւն մը չեմ տեսնէր:

Ծանօթ վաճառական թաւանճեան էֆէնտիի հակառակ, որ մօտերս կարեւոր հարց մը յուզեց ալքումուլութեան վրայօք, և ուրուն օր ըստ օրէ կը պատասխանեն մեր գրական մշակները իրենց զարգացման և միջավայրի աստիճանով, ոմն ոք, որպէս զի իր գրելիքը կամ փաստաբանելիք խնդրը արժէք մը ունենայ և բնական գոյներով ներկէ իր յօդուածը, ինքզինքը ալքումուլութեան տուեր է:

Այս դարավերջիկ անձը 5 ոսկի մրցանակ չանելու համար այսօր ալքումուլ մը եղած է, և կըսուի թէ իր տպաւորութիւնները կը գրէ գինեւորունէն դարձին կէս գիշերէն մէկ ժամ առաջ:

Ծանօթներէս մին վիպեո՜ր լաւ հասկնալու համար գերմաներէն սովորեցաւ, բան մը որ գովելի է իր նորութեան մէջ, բայց ալքումուլութեան դէմ գրելու համար ձեռքիմ մը ըլլալը . . . քիչ մը խոտոր կը համեմատի կարծեմ մարդկութեան հետ:

Վաղը թերեւս այդ անձը յաջողի իր ասպիւստ ձեռնարկին մէջ, և ստանայ 5 ոսկին մէկ անգամուան համար (վրաս գրէ) բայց միթէ բերնին համ տուող ալքումուլ պիտի կրնայ ձգել . . . :

Այս տողերը կարդացողը չպիտի հաւատայ այս արտառոց լուրին, բայց իրականութիւն է սիրելիներս, տխուր իրականութիւն մը որ անմտութեան բանալին է պէտք է ըսել, և որուն Գաղիացիք շատ լաւ կրնան պատասխանել և ըսել «trop de zèle»:

Ուրբաթ

Ազջիւանց յատուկ բարձրագոյն վարժա-
րան մը չունինք : Ահա հարց մը որ « Աւթո-
լամոյութեան դէմ » էն ա'լ աւելի նկատելի
է մեզ համար :

Մեր աղջիկները տասն և չորս տասն և
հինգ տարեկանին հասած օրերնէն ինքզինք-
նին թուալէթի կուտան , գլխարկի , հա-
գուստի , պոսալի և ֆանթազիի ետեւէ ,
և ընաւ կարեւորութիւն չեն ի տար կրթակա-
նին , ոչ ալ իրենց ծնողքը կը վերաբերուին
այս էական խնդրով :

Բանի՞ օրիորդ կրնաք մատնանշել մեր
մէջ որ երկրորդական վարժարանի աշակեր-
տի մը չափ ուսմունք ունենայ :

Դիւարկին քովընտի խորիւրին վրայ նեօ
մը , զոս մը չինելը լաւ գիտեն , բուստան
կերպընելու մասնագէտ են , փէշ բռնելու մէջ
տիբլօմէ , բայց երբ կարգը երկու տող նա-
մակի մը գայ , տեսէք թէ ինչպէս կը գրեն :

Ձեռքս անցած նամակ մը օրիորդ մը
ստորագրած հոս իբր նմոյշ կը դնեմ :

Յօքիս խուշիկս

Էրէկ իրինկուն կալու համար խօսք տուած
էիր խըյանէթ մինչէ՞լ կէսը պէքէյէցի օռ-
թան չեկար դաքուի՞ծան ալ պէքէյէց , էն
սօնը ճարեհինս հատով ումէսինս կըյրիցինք :
Բուզում յօքիս վազն առտու մուլթախա
կարըտ առ մեզի էկուր լախըւտը ունիմ
քէզի ըսելիք :

Ստորագրութիւն

Եւ հաւատացէք թէ այս նամակը գրողը
Յէ թիւ կլասէ պօթ կը հազնի , աժուռ գու-
պա , ֆիլտեքս կանթ կը դնէ , ա լա մօտ
գլխարկ կը կրէ , և դուրս ելած ատենը խո-
հարարը կռնակէն կը քալէ :

Շաբաթ 11 Յունիս

Առաւօտուն բարեխառն , ցերեկին բազ-
նիքի պէս տաք , երեկոյին սերին և գիշերը
բիրէաքթ ուեկարանութիւն :

Կիրակի

— Այգին հաւնածը սրտին աչքը կը մեր-
ժէ , չընդունիր :

— Կիները հնազանդութիւն կը փնտռեն
իրենց ամուսիններուն վրայ , իսկ ամուսին-
ները հաւատարմութիւն :

— Աւելի լաւ է ծանր պատիժներով տան-
ջուիլ , քան թէ խզծով :

— Խլատը ումանց համար ելեքտրական
հոսանք մըն է , վայրկինաբար կը ցնցէ կանցին :

— Կինը զսպողը ամօթի քողն է :

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՍՏՈՒԵՐՆԵՐԸ

Սարաւանդէն ,
Բուժայր բբուկներ
խոպանուկներու ,
Հոյլ հոյլ ,
Ոսկի ցոլքեր կ'արձակեն .
Իրենց նկուն ծղօսներուն
Գրգանքն հողմերե
Սարսուռներ կ'առքի
Օդի ցանցէ վերերուն ,
Ուր սոյլ մ'անուշիկ
Կը սուր յուշիկ
Թմբիւններու անկումին պէս ծանրօրօր :
Ստուերներն ինկած ,
Թոյլ հօնումներով
Դերբուկ գլուխնին
Կը հետապնդեն ,
Վարանքներով յուլական ,
Կը մերձեցան , կը տատամսին
Գաղսօրէն ,
Անոնց մետաք մարմիններուն
Կոլորսկին , կը հիւսուին ,
Կը հեռանան ընդոս երկուր ձեւեր զծելով ,
Սարաւանդի բարձրերէն
Ծործորներու եզրերուն :
Այսպէս փստն ալ ,
Ջերդ ստուեր մը չբաժնուող մեր կեանքէն ,
Մերք ետեւէն քայլը կ'առնէ
Հմայքներու շղթայումով խօլական ,
Մերք առջեւէն
Ու կը նախք քեւարձակ ,
Անկարեկիր անասունովն իւր վազին :
ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՌԻ

ՅԱԶՈՐԴ ԹՈՒՈՎ

Պիտի սկսինք հրատարակել նոր թեր-
թօն մը՝

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

որ հաճելի ըրանփոխ մը պիտի ըլլայ ապա-
հովարար Հանրագիտակի ընթերցողներուն ,
իր գերազանցապէս հետաքրքրաշարժ ու
զբօսեցուցիչ առաւելութիւններուն համար :

ՄԱՏԱՄԻՆ ՀՆԱՐՔԸ

[ԱԶՔԻՍ ՏԵՍԱԾԷՆ, ԱԿԱՆՋԻՍ ԼՍԱԾԷՆ]

Օրուան պէս պայծառ, ջուրի պէս վճիռ
ճշմարտութիւն մ'է թէ, կին մը երբ օրա-
կան մէկ ոչխար, տասը հաց և քառասուն
կանկառ ալ ուտէ, դիւրին է հոգալ, բայց
անոր ֆանթէզիին հասնելու համար Գառ-
նէկիներ, Մոկաններ չեն բաւեր :

Կինը կուգէ ունենալ, վայելել այն բոլոր
հաճոյալի բաները, զորս նախախնամութիւնը
ստեղծած և կամ մարդկային մտքէն դուրս
կուտայ հնարքի ձեւով :

Հաւատացէք, ամուսնութիւնը մեր մէջ
Պօնապոլէն պէտք մը գնելու պէս դիւրին
բան մը պիտի ըլլար, եթէ կնոջ ֆանթէզիին
չի պղտորեր օրուան երկտասարդներու միտ-
քէն ու քսակը :

Հագուստի մասին ֆանթէզի, գլխարկի,
պոթի, նոյնպէս և ի վերայ այս ամենայնի
պտոյտի և օգտփոխութեան կրկնակ տեսա-
կէտներով ալ այն բաղաժախս սխալմը,
որ խեղճ ամուսիններու պիւտճէն խանգա-
րելէն զատ անոնց միտքն ալ զբաղմայէն կը
հանէ :

Հիւանդութիւններ կան, որոնք սխալաբ
տը քիմիոյ և կամ մանեքիոյ չեն բուժուիր,
այլ ՈՍԿԻՈՎ, զուտ անարատ ոսկիով, այս
կարգէն է նաեւ օղափոխութիւն անուն հի-
ւանդութիւնը, որ ներկայ ամսոյ սկիզբէն
կսկսի Հոկտեմբերին վերջ տալու համար, և
գիտուած է որ միայն և միմիայն չըլլալիք
կինները կը վարակուին ասկէ, որոնցմէ կը
տարափոխուին զալ սլլը ամուսինները :

Հոս ջախերտի մէջ ըսենք թէ՛ բժիշկներն
ալ կարծես խօսք մէկ իրենց հետ, անոնք
ալ կը դադրեցնեն իրենց դեղագործները և
ոչ թէ կուտան հալածփոխին : Ոտքը նասրը ու-
նեցողէն մինչև ֆիկլօք քիթօյիտէն նոր ա-
պաքինող իրենց հիւանդները եալլահ հալա-
փոխի կը շրկեն, առանց նկատի առնելու
ոս արեւէն ալ պայծառ ճշմարտութիւնը թէ,
դեղարանին մէջ չիւնուելիք ուեքեքա մը առ

առաւելն 20 զրուշի կը պատրաստուի, մինչ-
դեռ վերին Վոսփորինը առ նուազն 20 ոս-
կի : Տարբերութիւնը դրամներու ճերմակին
և դեղինին վրայ է լուկ իրենց համար :

* * *

Քառասուն և հինգէն յիսունոց մայր մը
իր երեք աղջիկներուն հետ Տօքթօռին սա-
լօնը նստած իրենց քրտինքները կը խխին
— չըսեմ կը սրբեն — և ամէնուն ալ աչքը
դուռն է բժիշկին մուտքը տեսնալու համար :

Տիկին մայրը իր մաքուր և սուղկէկ հա-
գուստներով կարծել կուտայ թէ՛ կուտքու-
նողեաններէն է, ինչպէս նաեւ օրիորդներու
ձուր ճերմակ քօթիւմները, այնպէս կար-
ծել կուտան թէ՛ դպրոցական հանդէսէն ե-
լած չիտակ շունչերնին հոգ առած են : Աս
ալ այս տարուան մեղքերնին . . . :

— Ինծի նայեցէք աղջիկներ, ըսածներս
չի մոռնաք, հիմա դուռն Զարուհի սընըր ու-
նիմ պիտի ըսես, դուռն ալ Նուարդ վրաս
դուրս կուտայ կոր ամա հիմա անցաւ, եր-
կու օրէն նորէն կըլլայ պիտի ըսես, դուռն
ալ Ֆիլօսֆիկ՝ պիտէն պիտէ կը դողամ, վրաս
մարելիքի պէս բան մը կուգայ կոր ըսէ,
ձեզ նայեմ առ բանը պեճերուելու ըլլաք նէ
եազլըս երթալնիս կը սահինայ, չէնէ հի՛շ... :

— Աման մայրիկ տօքթօռը նայի աէ սու-
տերնիս օթան ելլա՛յ նէ՛ . . . :

— Ընհ . . . բանէ մըն ալ չեն հասկնար
անոնք, թուղթը կը մրտեն փարան կառ-
նեն կ'երթայ, Գաբիկ աղան նայինք, հա-
րերնիդ խանտրմիշ ընելը նայինք . . . :

— Եա տօքթօռը հայրիկիս ելլայ բան մը
չունին ըսէ նէ՛ . . . :

— Երկան ըրիք ալթըլս, չէնէ սատկեցէք
մահալէ առաջին նստեցէք, հէմ կը թուլը-
ռաք քի երթանք աէյի, հէմ ալ բիւրիւք կը
փընտէք կոր . . .

— Սուս, նա տօքթօռը եկաւ . . .

Եւ իրօք բժիշկը հիւանդէ մը դառնալով,
ջուրերու պէս քրտընած ներս կը մտնէ սա-
լօնէն, ուր իսկու չորս յաճախորդներուն՝
բրտինքը վայրկեանապէս կը չորնայ:

— Բարի էք եկեր տիկին, աս ի՞նչ է
նայիմ, կէնէ ի՞նչ եղաք...

— Սուս սօքթօս սուս, վերէն վար հի-
ւանդ եմք, նա մինձէս պաշլայէ, թող ըսէ...

— Ի՞նչ ունիք օրիորդ, զձեզ առողջ կը
տեսնամ կոր, հիւանդի շոշորդը չունիք բը-
նաւ...

— Չըսե՛ս Չարուհի, չըսե՛ս քի սընըրըս
կը բռնէ կոր տէյի...

— Ներեցէք տիկին, ձգեցէք որ ինք
պատմէ զգացածը...

— Հա ա՛մա աղջիկ զաւակ է, պէլքի
կը քաշուի կոր...

— Ըսէք նայիմ օրիորդ, օրուան ո՞ր ժա-
մուն կզգաք այդ ջղային նեղութիւնները...

— Հապա ժամուն մէջն ալ պունկ եր-
կու հեղ տէ, ժամկոցին կիրկը տուի անանկ
դուրս հանեցինք...

— Կաղաչեմ լուցէք տիկին, թող ինք
պատմէ...

Օրիորդը կմկմալով տնտնալով,

— Սըտեղս դուրս կուտայ կոր... վի-
րայ չիսլաններ կը հանեմ կոր սօքթօս...

— Բայց տիկին մայրը ջղային դրութեան
խանգարում ըսաւ, մինչդեռ դուք վրայ
դուրս տալ կը յայտնէք կոր...

— Քա աղջիկ անիկայ Նուարդին ըսելիք
հիւանդութիւնն էր, քուկդ սընըր էր...
չըսի՛ք եղի...

— Բայց տիկին, կարծեմ հիւանդը ձեր
աղջիկն է, մինչդեռ դուք խօսք կուտաք
կ'առնէք ինծի հետ, այնպէս որ տիպկնոստիք
մը ընելը կարելի չը պիտի ըլլայ...

— Չիտեմ ալթըն հիւանդը առջիդ է,
նայէ անոր կէօրէ ճուղապ մը տուր, հէմ սա
ալ ըսեմ քի իլաճ չի մնաց խուրսախը գնաց,
ֆայտա մը չըրաւ, պաշխա բան մը գիտես
նէ ան թէրթիպ ըրէ տէ աղջիկը ցաւերէն
ազատի...

Տօքթօսը օրիորդին բազկերակը կը քըն-
նէ, կուրծքը, կունակը կը զննէ, հազալ,
համբել կուտայ եւ աղջկան ներքին կաղ-
մուածին մէջ մանանխի չափ տկարութիւն
չի կրնար գտնել...

— Բայց օրիորդ, ձեր ոչ ներքինը, ոչ
արտաքինը խանգարում կը տեսնեմ հոս,
ձեր արիւնը շատ մաքուր է, վրանիդ դուրս
տուածի եւ ոչ մեկ հետք կը գտնեմ...

— Ի՞մ աչքովս նայէ եւ վրուս, զէրէ պա-
շի տալի՛ն կըլլաք տէ չէք կրնար հասկնար,
աս աղջիկս կեցած տեղը մոմի պէս կը մարի
կոր, էյ աղջիկ զաւակ է, ատանկ հիլլէթլի
անունը ելլայ նէ տուներնիս կատու մը չի
չալեր...

— Բայց տիկին, օրիորդին ջիղերը շատ
զօրաւոր կը գտնեմ կոր, չեմ գիտեր թէ...

— Պէ եւ' վրում, ինչ գիտնամ, իշտէ
կէնձ ու կանանչ բաներ են, իլաճ չեն ու-
զեր կոր, իլլէ հալա թէպտիլի կուզեն կոր,
մեր դիմացի կէնձն ալ ասանկ սրխընթըլը
է՛ր տէ, Սառը-հար կացին բիրթաք եղաւ...

Բժիշկը այս հանելուկէն բան մը չի կըր-
նալով հասկնալ, կուզէ թեթե դեղագիր մը
մրտուել իր երկու ճերմակը հախ ընելու հա-
մար:

— Կայնէ սօքթօս, օտթանճաս ալ մէյ
մը պիտի նայիս...

Հաւ, անիկայ ինչ ունի նայի՞նք...

— Իշտէ աս ալ քիչ մը ծուռ է...

— Ի՞նչ կիմանաք օրիորդ, ի՞նչ, ե ո՞ր
տեղերնիդ ցաւ կզգաք:

— Չիտեմ սօքթօս, մարելիքի պէս բան
մը կուգայ կոր վրաս...

— Օրուան ո՞ր ժամերուն կզգաք այդ
մարելիքը...

— Քա ինչ եաղըն պուզըն բաներ կը-
նես մարդուն, մարելիքը միլօտիկին հիւըն-
տութիւնն էր... սէրսէմ չուն, սա նայէ,
տահա հիմա դուրցեցի, շարխայի պիչիմ ըլ-
լայ նէ միտքերնէդ չելլար ամա...

— Կ'աղաչեմ տիկին, ձգեցէք որ հի-
ւանդները իրենք խօսին, իրենք բացատրեն
իրենց տկարութիւնը...

— Սխալեցայ մամաս, կայնէ նայիմ ի՞նչ
էր իմ հիւանդութիւնս... հա', մարելիք,
մարելիք կուգայ կոր վրաս սօքթօր...

— Չարմանալի բան, տասը տարիէ ի վեր
բժշկութիւն կընեմ երբեք նմանօրինակ հի-
ւանդներու չի հանդիպեցայ տիկին... արդ-
եօք կատակի ձե բա՛ն մըն է այս այցելու-
թիւնը...

— Տէր ողորմեա՛յ... օվուն օվուն կու-

գան կոր աղջիկները, սուր չախան կա՛յ, նա հիմա քիչ մը անցնի նէ կը տեսնաս, աչքին սեւերը խայիպ կըլլայ կը փռուի կոր...

— Շատ լաւ, ձեզի ջուր մը պիտի տամ...

— Քուզում տօքթօն, Քէստանէ-սուլին թէրթիպ ըրէ...

— Կազաչեմ տիկին, ծաղրելու մի ելլաք, բժշկութեան մէջ կատակը դործ չունի...

— Նասը կատակ, բէք աղուոր թէրթիպ ըսիր ջուրը ամա, իշտէ գիտես եա էլէնճէլի ջուր մը ըլլայ...

— Խմածքը քիչ մը լեզի է, բայց ազդեցութիւնը անմիջական...

— Էյ քեզի բան մը ըսեմ, հիշ չես հասկընար եղէր, աֆ կընես ամա, Քէստանէ-սուլին իլէն Չըրչըրը... անմահական են եա...

— Տիկին դեղ է տալիքս դեղ... բուժուելու համար տեսակ մը դեղ, դեռ ուրիշ դեղահամաներ ալ պիտի տամ... որովհետեւ տե այդ մարելիք ըսուած հիւանդութիւնը, եթէ լաւ չի խնամուի...

— Իշտէ կետինին տիպը ամսին, խընամիս օր մը եկաւ աէ, քիչ մը առանիս առինք տուինք, ասոնք ալ հոգ գտնուեցան դող ելան, անկէ պէրի է վրանին շոշորդ մը կայ...

Տօքթօնը հասկնալով թէ խօսքը երկարելը, բացատրութիւն տալը ժամավաճառութիւն պիտի ըլլայ, անմիջապէս դեղագիր մը կը մրտտէ, ու երբ կը պատրաստուի դեղին գործածութիւնը բացատրել, տիկինը խօսք առնելով,

— Էյ պղտիկս, տօքթօն, Ֆիլօսօֆիա ալ մէյ մը չես նայիր...

— Օ... չըսէք տիկին, հիւանդանոց մը պիտի դարմանենք այսօր...

— Վրաս բարի, ղուրուշուլս եկեր նայիլ կուտամ կոր, ֆարադա մէկ վիզլիթայ մը չէ ամա, հէլպէթ եօլերը գիտնալովս, քանի մը զրուշ էլէլ պիտի տամ...

— Ներեցէք տիկին, ի՞նչ ունիք օրիորդ, դուք ի՞նչ կզգաք...

— Փիտէի ամա մոռցայ տօքթօն, կեցի մամայիս հարցունեմ, ես ի՞նչ հիւանդութիւն պիտի ըսէի մայրիկ...

— Իրաւ խելքերնուդ է եկեր, քա աղջիկ, մախսճա կընես կոր քի դո՛ղ ելլամ

տէյի... ինծի նայէ տօքթօն, Ֆիլօսօֆիա պազի վրան դուրս կուտայ կոր, հիմաճուկ ներս քաշած է ամա՛, վաղը կը նայիս քի դուրս կուտայ...

— Լաւ, բայց մորթին վրայ ո՛ր է հետք չեմ տեսնար կոր տիկին, ոչ ալ արիւնը խանգարուած է...

— Իշտէ, պազի կըսեն քի հէքիմները չին հասկընար աէյի նէ սուտ չէ, խնամիկս եկած օրը ասիկայ բէք մօտս նստած էր տէ, պիրատէն պիրէ վրաս հալաս ըրաւ նէ դող եկաւ, էյ չըրէն իշի, պառտախ մը ճուրի մէջ կրակը մարեցի խմցուցի ամա, քսանը չորս սահաթ ըսես նէ խալիի պէս եղաւ սուռաթը, հէմ ամօթ է ըսելս, տս սաանկ պա՛ճախներով կոնակով կէօքսէրովը...

— Շատ լաւ, հիմա սիւնկէր մը թէրթիպ պիտի ընեմ ծովի ջուրով Ֆոլիքսօնի պիտի ընէք...

— Համա՛, աֆ կընես չի հասկըցայ...

— Շըֆէք պիտի, պաղ պաղ ափէն առաւօտ, չփելու է, երկրորդ ջուր մը պիտի գրեմ...

— Քա նա իշտէ, Ֆիլօսօֆիա ալ ջուրերը աղէկ է եղէր, քուզում տօքթօն, աստար ջուրերը էզաճիին բերել տալերնուս տէ տվուճ ալուճ փարայ տալերնուս, մենք ելանք ջուրերուն ոտքն երթանք նէ տահա աղէկ չըլլա՛ր... Աճապա մէյ մը զիրքդ պանայիր աէ նայէիր... պէլքի մէջը հա՛վա փոխով ալ կանցնի դրուած է, ամօթ չէ եա, մոռցած կըլլաս...

Բժիշկը տեսնելով թէ՛ իր յաճախորդ երեք կարծեցեալ հիւանդները իրմէ առողջ, և տիկին մայրը քոխք մը ունէր իր գործքին ու խօսքին մէջ, կը յարէ,

— Գիրք բանալու և կտմ մօռնալու խընդիր չիգայ տիկին, ձեր օրիորդներէն աւելի, հրամանքնիդ կազդուրուելու պէտք ունենալնիդ կռահեցի, ուստի...

— Քուզում տօքթօն, միտքիս մօտ բան մը զուրյելդ հասկըցայ ամա, քիչ մը տահա աչըրի ղուրյէ քի հասկընամ...

— Այո տիկին, ձեր օրիորդներէն աւելի դուք օղափոխութեան պէտք ունիք...

— Թէ՛վէքէլի չէ քի նէվազիլ մը ըլլամ նէ, հրամանքիդ խաղար կը զըրկեմ... նայէ մէկ նայելուդ հասկըցար...

— Ուրեմն տիկին, առանց ատեն անցընելու կամ ժամանակ կորսնցընելու, վերին Վոսփոր տունն մը բռնեցի՜ր նայեցէք, թէ օրորդներուն և թէ ձեզի առաջնակարգ դեղը պիտի ըլլայ . . .

— Ա.Ֆ կընես ամա, պերանդ պաղնիմ, զաւկիս տեղն ես, աղէկ ըսիր ամա, մեր Գաբիկ աղան դէմ գուգայ կոր, սուոր մէկ չարէն . . .

— Ես ձեր ամուսնոյն պէտք եղածը կը խօսիմ, և անշուշտ դիտէք թէ, ընտանիքը սիրող ամուսնոյն մը երբ բժիշկը խորհուրդ մը տայ . . .

Ջարուհի, որ ըստ երեւոյթին տօքթօռէն չատ ակործած էր,

— Մայրիկ, միւսիւ տօքթօռն ալ տաւէթ ըրէ, թող գայ մեզի կենայ . . .

— Էյ հէլպէթ աղջիկս, զահէր եապանծի է, հա՛ կա՛ ինչու չէ, կ'սպասենք տօքթօռ, եանի խըլախ սօյէն կիւճէնմիշ կըլլամ չիգաւու ըլլաս նէ . . .

— Ինչ կըսէք տիկին, մենք մեր գործը կրնա՞նք ձգել . . . մենք ծախուած մարդիկ ենք, չենք կրնար տեղերնու չարթիլ . . .

— Վուշ վախնամ ուրմաթիզմա ունիս եաւրուս, տահա աղէկ եա՛, կուգաս դուն ալ հաւա փոխ մը կընես, Գաբիկ աղան անտեղուանքը չէ, թէքին չիֆթին չի նայիր . . .

— Զի հասկըցաք ըսածս տիկին, փառք Աստուծոյ բան մը չունիմ, բայց ըսել ուզեցի թէ՛ մենք բժիշկներս տունէն չենք կրնար հեռանալ, միշտ հիւանդներու կը կանչուինք . . .

— Է՛հ, դուն գիտես եաւրուս, ըսել է քի ասանկ, դուն Գաբիկ աղան պիտի տեսնաս, խօսիս, գործերնիս կարգին պիտի դընես, ըսելով ոտքի կ'ելան, մինչ բժիշկը իր վիզիթան հալա ընելու համար, ձեռքերնին ուեցիքա մը կուտայ, երկու շիշ վիշի, կերակուրին հետ խմելու համար . . .

* * *

Հետեւեալ իրիկունը Գաբիկ աղա, դէմքը կախ տուն կը հասնի և առանց խօսք մը փոխանակելու անկիւնը կանցնի կը նստի, մինչ տիկինը դէմն անցած պատճառը կը հարցունէ . . .

— Խեր է ինչալլահ, Գաբիկ աղա՛ . . . չօք չէյ, ո՛ւր տեղդ կը ցաւի կոր, կոտորո՞ւք մը ունիս . . .

— Բէսէ՛ս . . . քէսէս գէշ սօյէն կը կոտտայ կոր . . .

— Էյ աման դուն ալ, չախայի մի տանիր, դող կ'ելլամ կոր . . .

— Բեզի ինչ կըլլայ կոր, դող ելլամ նէ ես պիտի ելլամ . . .

— Հէքիմի մը գացի՞ր պարէ . . .

— Ես չի գացի ամա, ան ինծի եկաւ ասօր . . .

— Է՛յ . . .

— Սա էմզիկը բերանդ առ տէ, արարօթն ալ տաքի բեր . . . սանքի հիշ խապար չունիս հէ՛ . . .

— Որմէ՛ խապար ունենամ, աղէկ եա՛ ինչ տէյի տօքթօռը քեզի եկա՛ւ, սա՛ ըսէ ինծի . . .

— Հաւա թէպիլիի պէտք ունիմ եղեր տէ, մարդը ինծի մեղքնալուն եկաւ խապար տուաւ . . .

— Թօհաֆ բան, մեր չօճուխներուն ալ ատանկ թէրթիպ ըրաւ, ամա դուն բան չունէիր նէ . . . հայտէ Ջարուհիս վախէն վրան դուրս կուտար կոր, զահէր անոր համար է . . .

— Մայրիկ անիկա իմին հիւանդութիւնս էր, նոյն դուն ալ պաղի կը մոռնաս չաչըրմիշ կընես կոր . . . խօսք առաւ Նուարդ, որ հոն կը գտնուէր այդ պահուն . . .

— Սուս իշտէ ինչ գիտնամ, ամենուդ ալ հաւափոխ թէրթիպ ըրաւ, նայէ հարերնուդ ալ անանկ թէրթիպ է ըրեր . . .

— Աս տօքթօռը տահա մէկ քանի ֆամիլիաներու ալ ասանկ զօրութեամբ ունէլթասը ընքնանալու թէրթիպ տայ նէ, էզաճիները գիտնալս թէմիզ մը կը տփեն . . .

— Բէք ալ աղէկ հէքիմ է, ներսիթինիս իլաճով լեցունելուն, հաւա թէպիլի կըսէ կոր . . . տահա՛ ինչ կուզես . . .

— Հասկըցանք ամա, չիշէ մը իլաճը քան զրուշ ալ ըլլայ նէ, մէկ եաղըլս տուներ քան դակի է մատամս, խապար ես . . .

— Հոգիմիս ողջ ըլլայ, ամենը կերթան կոր նէ հէլպէթ բան մը գիտին, պարտքով ընելու չենք եա, Աստուած գործիդ պէրէքէթ տայ, վաստակդ ո՞րինն է քի . . .

— Աղէկ ամա, Պօղազ իշին հաւանսէրթ է, եա ելլայ չարթմիշ ընէ նէ . . .

— Հոգդ պիլէ մընէր, մենք հէքիմիս ու

տալէթ ըրինք, էյէր քի գալու ըլլայ նէ հիւ մի վախնար:

— Ատ չըսես քի, հէքիմը հաւա թէպտիլի պէտք ունի եղեր տէ, մեղի օթէլ պանալ կուտայ կոր իր ըռահաթութանը համար... , խելքիդ եկաւ քա կնիկ... Ինչ գործ կը բանաս կոր գլոխիս...

— Ինծի նայէ (քիւ մը դուրս ելիր քա Նուարդ) ասանկ լոխմա մը տունդ գայ նէ, պագ տէ ճակատդ դիր, երէկ մուսնէնէր գացինք նէ Զարուհիս կէօքսը, կունակը սահաթներով մտիկ ըրաւ, հէմ ալ աչքին պոչը վրան մնաց...

— Զըսես քի դուք հէքիմին ցուցունու համար չէ, տիւղճէ աղջիկտես էք հաներ չօճուխները... խելքիդ եկաւ քա կնիկ...

— Ինծի նայէ, ասանկ պարակ գործերուն մէջը մի մտնար դուն, աս պիչիմը պաները մօր մը գլխաւորներն են, դուն ինչ կը հասկընաս...

— Կըրնաս նայիմ էլ ալէմին պէրանը քեռրով պօռուսի պէս պանալ տար վրանիս, հէքիմը ճալակողտեցին տէյի...

— Դայ նէ գլխուս վրայ ամա... նէ ֆայտա քի չի գար կոր... հիմա պօշ խորաթան ձրգէ տէ, վաղը քեզի հետ մէյ մը երթանք տունը ույտուրմիշ ընենք...

— Մեր երթալը ֆայտա չունի, սուաջ սառաֆ Փիլիպոս աղան երթանք ույտուրմիշ ընենք տէ անկէ ետքը տունը խոլայ է...

— Տեսա՞ր, ինծի համար բան կըսես կոր քի տունս մարդ կը պերեմ, հէքիմ տալէթ կընեմ տէյի, ատ սառաֆ Փիլիպոս աղան ինչ տէյի պոչիդ կը կապես, բէշ կը քաշես կոր...

— Պէ պաղամ, Փիլիպոս աղան գալու չէ, իր թառաֆէն քան հատ սառը միսաֆիր պիտի զրկէ...

— Վույ ծունը թէփէյիս, իչտէ ան վախիթը օթէլ պիտի ըլլայ տուններնիս... սա նայէ:

— Անոնք մէյ մը ճաշնաո նէ, չես կըրնար բաժնուիր, բէք անուշ միսաֆիրներ են, ֆախաթ չատ չեն կինար, էկէր բիւթիւնը մէկ գա՛ննէ, ամիս մը չի քչէր ջուրը կը քաշեն...

— Էյ ո՞վ կըսուին սառնք, խըսըմ են ինչ են...

— Խըսըմ չեն ամա, բէք մարդու մօտ են...

— Անուններն:

— ՈՍԿԻԵԱՆ ԵՂՐԱՐ:

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուել, շուրիլ եւ աղամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կարասիներ կոկել ամէն կերպով, առանց քաւկնիդ պարպելու

ԱՅԼ

ԱՊԱՌԻԿ

Մայր ես, աղբիւնդ օտարը կը մտածես՝ դիմէ:

Օրիորդ ես, շիք եւ աման հագուել կուզես՝ դիմէ:

Երիտասարդ ես եւ շիքը կը սիրես՝ դիմէ:

Տարեց ես եւ ցուրտէն պատապարտել կուզես՝ դիմէ:

Տղաքներ ունիս որոնց պիտոյը զանկ կը ճառեցնեն՝ դիմէ: Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ: Եկածը կաղանդ, է նուէրներ գնել կը փափաքես՝ դիմէ:

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ: Զեռք պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ:

Կուզես տունդ կոկել ճաշակուոր կարասիներով՝ դիմէ: Առաջնակարգ եւ տոկուն գոլպաներու պէտք ունիս՝ դիմէ:

Կուզես շիք, ճաշակուոր եւ լաւ տեսակ փողկապներ ունենալ՝ վերջապէս կուզես ոտից ցլուխ հագուել, շքուիլ, պնուիլ:

Դիմէ միմիայն

“ՀԷՐԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ, ԴՈՒՅՈՒՄՆԵՐԼԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՐ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուուոր, ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի, ժամացոյցներու, շլթաներու եւ ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւր ըրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5ը շաքաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած աղբանքներէն միմիայն աղամանդեայ դահարեղէնները երբ գործածուած լայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն աղամանդեայ դահարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կ'առնուին:

ՍՍ.ԿԱՐԱՌԻԹԻՒՆ ԶԵԱՅ

ԱՐՈՒԵՍԱԳԵՏԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

1905, Յունիս 5

Երկու օր է այսօր որ առանձնառենակիս մէջ մինակ եմ: Առանձնութիւն, արդարեւ ինչ քաղցր վիճակ մըն է այս, քանի՜ հաճելի պարագայ մը ինձ համար:

Պատահանիս վարադոյրները կրկնապէս ծածկած են ապակիներուն թափանցկոտութիւնը, սիրուն հանդարտութիւն մը և խորհրդաւոր աղօտութիւն մը կը սաւառնին հունաւոր մթնոլորտին մէջ անփառունակ խցեակիս: Հեռու տաղտկալի ժխորէն մարդկութեան, անջատ յարատեւ աղմուկէն հաճոյքի աշխարհին՝ ապրիլ անձայն, անշուք, անդորրիկ կեանք մը և, խորհիլ այն աշխարհիկ ամէն բանի վրայ զոր միտքը կ'ուզէ և սիրտը կը տենջայ: Հիմա կը հասկընամ թէ նախնի վանականները կամ սուրբերը ինքզինքնին առանձնութեան կը նուիրէին վայելիլու համար առանձնութեան հաճոյքը զոր՝ ինչպէս այսօր ես՝ կըզգային անոնք ալ: Աստուածաշունչ զիրքը կամ յետոյ Աւետարանը անոնց ձեռքին մէջ ժամանակին բանաստեղծութիւններուն հաւաքածոն էր կոչւած և ո՛չ ուրիշ բան: Այսօր անոնք ես ալ զրելու սեղանիս վրայ ունիմ ժամանակակից հեղինակութիւններու դէպ մը: Օրուան զրազանութիւնը ընթերցումիս և խորհրդածութիւններուս նիւթն են: Ինծի սիրելի ո՛չ ինչ կը պակսի մանուկ սենեակիս մէջ: Պատերէն վար, ոսկեղօծ ծաղկեղբուազ թուղթերու վրայ դէմ դիմաց կախ կը մընան Համէթի, Անճէլօի, Քինի, Ռօմէօի, Գամելիազարդի, Զադաի և Քաթէրինի պատկերոտ տեսարաններու նկարները, որոնց ներքե իրենց յաւիտենական անմահութիւնը կը պատկերեն Շէքսպիրը, Հիւկօ, Քալալօ, Տիւմա, Մէթէրլինկ, Իպսէն:

Ժամերով աչքերս անբաժան ատոնցմէ, անքթիթ ու անձայն՝ միտքս իրերայաջորդ զազափառներու անվախճանութեան մը մէջ կը յածի՝ ու կը թափառի: Այո՛, կը խորհիմ անա՛նկ բաներ՝ որոնք պիտի քաշքշէին ու ւարչիկէին դանկը մարդու մը՝ որ ցուրտ ու

անտարբեր դերեզմանաքար մը կը դիտէ, որուն վրայ նկարէ մը դատ ոչինչ կայ:

Եւ սակայն, ատոնք իմ ամենօրեայ հաճոյքս կը կազմեն:

Երբ, ամէն օր, շուկայիկ կեանքի մը տաղտկալի քանի մը ժամերը անցնելէ վերջ կը դառնամ կիսաստուեր դամբարանս, այս կեանքիս հաճելիութիւնը հետզհետէ աւելի կարկառուն, աւելի իրական երանգ մը կըստանայ ինձ համար, ու կը մրմնջեմ իւրովի, «ինչ անուշ է սա կեանքը, ո՛րքան լաւ պիտի ըլլար եթէ ստիպուած չըլլայի այդ քանի մը ժամերն ալ դուրսը անցունել»:

Բաղուկներս կուրծքիս վրայ խաչաձեւած՝ կը կանգնիմ լուսանկարներուն դէմ՝ սա իմ սիրասուն արուեստագէտներուս, ու խորունկ եւ անդարձ նայուածքով մը՝ դիմական նմանողութիւն մը կը նկրտիմ զըտնել, արուեստի ու համբաւի հաշտ զուգակցութիւն մը կը ձգտիմ յատկացնել Նովէլլին, Ալբամեանին, Գօզլէններուն, Սաւաին, Հատէնկին, Մնակին, Թրեանցին, Ռշտունին, Սալվինին, Հրաչեային և տաւալուն շատերուն մէջ՝ որոնց նկարները մասնաւորապէս կը կազմեն Օ՛խ, քանի՜ հրապուրիչ է համադրութիւնը ընել հեռաւորին ու մօտաւորին: Այսպէս ժամերը կ'անցնին անզգալաբար, ու ես տակաւին կը մնամ հոն ոստոստուն նայուածքով, լուռ ու մտախոհ:

Ահա՛ իմ ամենէն աւելի սիրելի արուեստագէտի կեանքս. մինակ ըլլալ, քիչ, կարգաւ ու շատ խորհրդածել: Եւ պիտի շարունակեմ այսպէս ընել միշտ:

Յունիս 6

Այսօր ծանօթներէս մէկը ինծի այցելու եկաւ: Հարցուց թէ ինչո՞ւ քանի մը օրէ ի վեր իրենց մօտ չեմ երեւիր: Նոր կեանքս բացատրելով եղբակացուցի թէ՛ ես ա՛լ ուսումնասիրութեան սիրահար եմ ու ասկէ դուրս ո՛չ մէկ բան ինծի հաճոյք կ'առնէ:

— Աղէ՛կ, սա կեանքէդ չե՞ս ձանձրանար:

— Երբե՛ք, վա՛յ այն մարդուն որ չը կրնար մինակ մնալ և ուսումնասիրութիւնով զբաղիլ առանց ձանձրանալու և կը նախընտրէ անմիտներուն հետ տեսակցիլ քան թէ ինքն իրեն հետ:

— Սակայն ամէն մարդ անմիտ չէ :

— Մարդ իր գիտակցութիւնովը կամ կամքովը չէ՛ որ անմտութիւն մը կ'ընէ, այլ կեանքին ինչ ինչ դրուադները, ապրելու պարագաները պատճառ կ'ըլլան մարդուն որ անմիտ ընթացքի մը հետեւի : Ես չեմ ըսեր թէ դո՛ւն ալ, քու բարեկամդ ալ իմ կեանքս վարէք, երբե՛ք սիրելի՛ս, ինչպէս ամեն մարդ՝ դուն ալ տէրն ես քու անձիդ, մէջ՝ կո ալ : Եւ արդէն ո՞վ ըսաւ թէ բոլորովին առանձին եմ, նայէ՛, ահա՛ իմ անձնուէր բարեկամներս : Ասոնք ցուրտ պատկերներ չեն ինձ համար՝ այլ քաղցրայոյզ զգացումներու երկնահոր բովեր : Գանկս յաւիտենական ընդունարանն է ասոնց ներկուռ իմաստասիրութեան, սիրտս չմոռցնական բուրձանն է ասոնց զգացումներուն . . . :

Ու յամբարար մօտեցայ այդ տաղանդաւոր մարդերուն նկարներուն և կրակոտ համբոյրներ դրոշմեցի ամենո՛ւն ալ ճակատին :

Երկար ատեն անձայն ու մտածիտի, հիացումի ցոլք մը աչքերուս մէջ՝ դիտեցի այդ գերզգայնիկ հանճարները :

ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՁԱՐԱՆԻ Ի ՊԱՐՏԻՋԱԿ

Երկուշաբթի 13/26 Յունիս 1905 էն մինչև 14/27 երկու օրուան մէջ կատարուեցաւ Պարտիզակի Բ. վարժարանի ամառնային հանդէսը և վկայականաց բաշխումը բազմաթիւ ծնողաց և հիւրերու ներկայութեան :

Բարձ. վարժարանը այս տարի ալ իր բանիւրուն պտուղները կը ձօնէ գործնական աշխարհին :

Հաստատութեան այս անդուլ յարատեւութիւնը և մեղուաջան յառաջդիմութիւնը ամէն գովեստէ վեր է, չնորհիւ Տնօրէն՝ Տօքթ. Չէմպրոսի և կարող ուսուցչական մարմնոյն :

Խմբագրութիւնս ջերմապէս կը խնդակցի վարժարանին օրինակելի ընթացքին և նորանոր յաջողութիւն կը մաղթէ յաջորդ շրջանին համար :

ՍԱՐՍԱՆՆԵՐ

Անուշի մը մէջ, կապտաւուն ու սաւառ, Ծրփուն, շոգեղէն սքնակ մը մ'այլերանգ, Յանկարծ կախուեցաւ օդին մէջ սարսուռն, Երկինքի ծաւի բարձրեւեմ անհուն :

Ու բոյլ ուսում մը, խօյլ ցընորանքներ, Թեթեւ բռիչ մը տուն ինձ բերեւ, Եւ այդ սքնակին մէջ բիւրեղավառ, Ձիւս առաջնորդեց տղայ մ'օղակար :

Այդ տղեկն ինքն էր, Այն՝ զոր կը սիրեմ, Որուն գաղափարն անուռ ու վսեմ, Կը հոսի ամբողջ մարմնիս մէջ անդուլ, Բոյրին պէս այրող՝ զոր մըխայ սրմբուլ :

Հոն մեր շրջաններն իրարու դրպան, Սարսուռաց հոգիս դողով մ'անցայման, Պատմել հիմա այդ հանոյցն, անբարբառ Գրչի խաղերուն չէ տուած իսպառ :

Բայց երազն անցաւ զեփիւռի պէս շուտ, Գայթաղուած ա՛յնպէս՝ ինչպէս ծիցուեցաւ, Հիմա աչքս բաց, կը դիտեմ փոռս Արթնութեան կեանքին պատրանքներն ու ցուռ :

Ա՛ . . . շա՛տ անուռ էր այդ համբոյրն-երազ, Որուն համն ու բոյր դեռ կը լընուն զիս, Բայց այդ տղեկն՝ իր շրջաններն կեռաս Անցիւթութեան մէջ, ո՛հ, դիւրեց հոգիս :

Շրջաններս այսօր ծառաւով մ'անհուն, Համբոյր կը փնտռեն, սիրասարի, ուժգին, Եւ կը յիշեցնեն ինձ այն երազուն, Վարդաբոյր նուազն անցիւթ համբոյրին :

Այլ . . . կը կասկածի՛մ . . . իրականին մէջ Կան այն սարսուռներն իմ երազներուն, Ուր երբեմն հոգիս կ'առնէ ելեւեղ, Տարփանքով արբիւ, հանոյով քրքուն :

ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԲԱՐՁՐ ՈՒ ԽԵԼԱՑԻ ԽՕՍՔԵՐ

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԵ ԿՏԱԽՃԵԱՆԻ

== Եթէ կուգես հարուստ ըլլալ, պէտք է շատ դրամ շահիս ու քիչ ծախես, եւ երբ արդէն լուսանոցի աղապատ ալ պատկառելի ու ակնածելի գումար մը բողած է, այն ասեմ կրկնա մեծահարուստ:

== Երբ հակառակ փափաքանացող զգեղ չեն յարգեր ու պատուեր քու բաղիդ մէջ, պէտք է խօսողը-մաղաղայէն խաբ մը ապառիկ գօսքիւմ գնես ու Պախալ գիւղ երթաս, ուր պիտի կոչուիս չօրպանի:

== Գրական մարդուն ամենէն մեծ կուրուստը այն է՝ երբ մամիկին մահուանէն վերջ ժամկոչ աղբարը կողոպտուին հետ տօբակին ալ կը կողոպտէ:

== Պարկեց կինը ոչ միայն իր հագուստէն կը ճանչցուի այլ եւ իր պարկեցութենէն:

== Ոչ միայն հարսութեան յարգը աղբարութեան մէջ կը ճանչնա, այլ եւ խաւառունջ ձմեռուան սառին յարգը տօբակեղ ամառուան ջափին, որմէ կը պատահուի քողոքաւորում ու զովագոցիչ պսղապաղակը:

== Աւստիւստիւնը հարսութեան ջիւղն է իսկ ծուլութիւնը ֆօֆօլութեան ճիւղը:

== Քանի որ գեղեցիկ կիները երկու անգամ կը մեռնին, հետեւաբար զգեղ կիները անմահ կրկնան:

== Գրականաւ ըլլալու համար գիրքերը ճանչնալու ու գիտնալու է:

== Գրագէտ ըլլալու համար գիրքերը կարդալու ու գիտնալու է:

== Բանաստեղծ ըլլալու համար բանաստեղծ ծնելու է, իսկ բան մը ըսած ըլլալու համար «պէն զաշէնէսկ մեշրէպիւ»-ը ճուպ ճուր ընելու է:

== Յանախ ամուսնանալու փափաք չունեցողներն են որ շուտ կամուսնանան, իսկ տամաղիր ու մտաղիրները անպատահաւ երկու երեսունէն վերջ:

== Ամուսնական կեանքի վրայ ճառող մը կարծեմ դեռ չէ ծնած:

== Նոր բանաստեղծի ու գրագէտի մը խապառ արգիլեալ է գրական «պայաք բազարի»-էն անցնիլ:

== Մի վախճա՛մ այնչափ միտնալներէն երբ հագիւ տարին մէկ ժամկոչ աղպար մը կը մեռնի, բայց՝ միշտ զգուցեցե՛ք անկէ:

== Ոչ միայն վիտէր բաղիները կը համրէ, այլ նաեւ բաղին գիշերապահը ու ակռայի ցաւ ունեցողը բաղիներ համրելով գիշերը կը լուսցնէ:

== Այն բանը որ մարդուս ախտ կրկնայ հետեւանք աղտ կրկնայ:

== Նուէրը բարեկամութեան կապն է, եւ եթէ Տիար Կսանեան իմ բարեկամս եղած ըլլար, ապա՛նով եմ որ Եզմիթի համբաւուն պանիրէն կոյս մը ինձ նուիրէր:

Հաւաքեց ու ամփոփեց

Սկիւսար

ՍԱՂԱԹԻԼ ՊՕՂՈՍԵԱՆ

ԿՈՅՍԻՆ ԱՂՕԹՔԸ

Պաղատանով մը անհուն,

Ասուածամօր պատկերին

Առջեւ, կոյս մը լալագին՝

Բանայ ցաւերը սրբին:

Մունը դրած ի գետին՝

Կա՛ղօթ լո՛ւռ ու խոհո՛ւն,

Աղօս-լոյսին հետ մոմին՝

Կարծես հալի՛ իր մարմին...:

Աշուրները սեւեռուն՝

Յառած Տիրամօր դէմքին՝

Տծողն-լոյսին հետ մոմին

Գողցես անոնք ալ հասնին...:

Վերացումի այդ վտե՛մ,

Ու եզական վայրկեանին՝

Աղօս-լոյսին հետ մոմին՝

Կարծես հիւժի՛ իր հոգին...:

Ու սրտառու աղբար՝

Բղխած սր՛բի խորեւէն,

Անուշ-բոյրին հետ խունկին՝

Կը բարձրանա՛յ դէպ յերկին...:

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍՍԵԱՆ



ՅԻՐՈՒՑԱՆ ԽՕՍՔԵՐ

Բանտ — Չար մարդոց վանդակը :

Բրիջ — Գործիք մը երկաթեայ , որ յաճախ հողը կը փորէ թէն , սակայն մերթ ընդ մերթ սրտեր կը խորէ :

Սիրտ — Քարէ — Ջիղէ ու երակներէ — Խանդոտ — Առաջինը բոլորովին անտարբեր , երկրորդը դիւրագրգիռ , իսկ երրորդը զգայուն և կատարեալ մարդերու կը պատշաճի :

Կիրք — Ջղային մէկ հիւանդութիւն է :

Խիղճ — Հոգւոյն նժարը , որուն մէջ կը տեսնուի անոր յստակ ցոլացումը :

Հովկուլ — Արդի յիշանաւարտները :

Կեղծիք — Կնոջ բարոյական ունեցող մարդերուն մէկ քարթիթալը . ասոր տեսակէրը շատ են , ինչպէս . քծինք , սուտ վեհանձնութիւն , առ երբեքսս աստածեանութիւն , (բարեկամի մը հետ գտնուած ատեն աղքատի մը տասը փարայ միայն տալով) ի խնդիր կլլեցնելու ունենդիրին իր սուտ ու պատիր խօսքերը :

Վարժապետ — Տիրացու — Լեզուազէտ — մասնագէտ — համայնագէտ — Հիմայ աշխարհ տիրացու վարժապետներով լեցուած է , լեզուազէտ 0/8 ը , մասնագէտ 0/7 ը իսկ համայնագէտը 0/5 միայն կը գտնուին թէն , սակայն տիրացու վարժապետներն են որ կ'ուզեն համայնագէտի հովեր առնել , առանց նկատի առնելու իրենց գիտցած ալելուեան ու տէր ողորմեան , որ եկեղեցիէն զատ դպրոցէն ներս փարայ չընեն :

Վարժունի — Ծնորդալից էակներ , որ յարգանքն ալ գիտեն պատշաճօրէն գործածել . հրապարակի վրայ կը վստայ թէն անոնց խմբակը , սակայն 0/10 ը միայն քուէով կ'ընտրուին կարողադոյնները ու կը կոչուին գիտակցօրէն պաշտօնավարելու ազգին սեփական հաստատութիւններու մէջ :

Անարգանք — Անկիրթ մարդերը կ'ուսենան այս թերութիւնը , մեծագոյ պողոտաւորներով իրենց դիմացինը յաղթահարած ըլլալու միամտութիւնով համոզուած գոյացուցած էակներ են , մինչդեռ հեզահամբոյր բնոյթ ունեցող մարդիկ համոզկիր խօսքերով միշտ ու միշտ յաղթանակը կը շահին :

կատարեալ բարեկրթութիւնով նոյն իսկ պատկառանք ազգելով իրեն զիմացիին :

Յարգանք — Պարագային համեմատ խելացութիւն է սինլքորներու այդ ձեւը գործածել մերթ ընդ մերթ :

Շփացածութիւն — Ես գիտեմծիները միայն այս հիւանդութեան ենթարկուած կըլլան :

Էնսիւր — Կարգ մը հարուստներու միշտ ու միշտ գործածելիք շիշէ մը , սակայն բարեկրթութեան ներած չափով միայն , որ իր օգտակար դերը կ'ունենայ յաճախ :

Մեծամեծ — Չ'տես հարուստ :

Խրատ — Առանց իր թերութիւնը հասկընալու , ուրիշին զլուխը արդուկել ժամերով :

Չօն — Գրական նուէր , միամիտ ու սկսնակ գրողներու , որոնք զրպակութեան սահմանէն անդին չ'են անցած դեռ :

Հարս — Փետրաղարդ սիրամարդ :

Փեսայ — Կոկոզավիղ ազլոր :

Ապաստանը կամ ուհի — Լարուած ֆօնօկրաֆ , ապագային ամէն զաղտնիք նոյնութեամբ արձագանդելու համար ամենուն արձակ համարձակ :

Դէճկր

ԱՐՇԱԿ Գ. ԻՍՊԷԼԵՐԵԱՆ

Արդուկ — Յիւուցան խօսքերու հաւաքածոն .

Ծ. Խ.

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիգի եւ Պեռլինի

համալսարաններէն

Ամէն անոնք , որոնք կուզեն քիչ ժամանակուան մեջ , խիստ դիւրամատչելի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն , ինչպէս նաեւ Յիւաններէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է դիմեն Պանքե-գափու Բալուգաի վաճառատունը , ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրախաւնութիւնները դասախօսութեան առթիւ :

10—3

ԱՐՏՈՑԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՋԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ.Ալի ԵԱՏԵՍԻ Թ. 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՄԱՍՏ ԵՒ ԶԱԳՈՒ ՎՐԱՅ

Գ. ԵՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համալս, Թօփաղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանապ առկունութեամբ և գիներու անմրցելի առժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քեյրոսիներու և տղայոց չիք և գիմացկուն ֆօքսիսներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն տնոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից .

աակՍրկո լթիւն չկայ, թիւը 2 զրէ է.

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին .

40—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր, ջուրի և անձրեւի կը դիմանան, մլուկները կը ջնջեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց գիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է աոյն գներով իր վերայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյե՛ք մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Ամէմեան : — Գաւառները գործակալներու պէտք կայ, գիւրամատչելի պայմաններով :


5—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԼՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճեյար-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Ր Ա Ր

Ֆոնոկրամֆոնի եւ Գլաֆոնոն. Կրամֆոննի եւ Երկկողմ Բլագներու, Կեղրոնա-տեղի Պահճե Դաբու, Հանի Պեքիր Էմլնտիկ կից, Եալտըզ խանի տակ քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Դաբու քիւ 52:

Վաճառատանս 30 տարիներէ ի վեր ծախած ապրանաւ տու կունութեան և թէ նորոգու-թեան մասին չահած համբա-ւը բաղմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր զրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաւ հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանճարարութիւնք կը կա-տարուին ամենայն ուշադրութեամբ և հողածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝ կեդրոնատեղին: